

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ՝ ՀԱՄԻԼԹԸՆԻ ՀԱՅՈՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻՐ ԱՐԱՄ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻՆ ՀԱՐԱՉԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Համիլթոն, Գանատա

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն և Մեր սրտէն Ձեզի, Ձեր բարեպաշտ Մայրիկին և Ձեր ազնուաշուք Տիկնոջն ու սիրասուն զաւակներուն կը բերենք Մեր հայրական սիրոյ ողջոյնը և հայրապետական օրհնութիւնը:

Մենք երջանիկ ենք որ Դուք հեռաւոր Գանատայի ափերուն Ձեր հարազատ հայ հաւատացեալի ոգիով ուղիղ կը հասկնաք հոգեշէն առաքելութիւնը մեր Մայր Եկեղեցւոյ և չէք խնայեր Ձեր բարոյական ու նիւթական օժանդակութիւնը ի խնդիր այդ սուրբ առաքելութեան աւելի ու աւելի ճառագայթումին:

Մեծապէս գնահատելով Ձեր նիւթական մեծագումար նուիրատուութիւնը ի շինութիւն Համիլթընի Ս. Աստուածածին եկեղեցիին և ընդառաջելով Գանատայի հայոց բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Քէշիշեանի միջնորդութեան, այսու Մեր կոնդակով կը պարգևատրենք Ձեզ «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով, մաղթելով որ զայն կրէք Ձեր բարի սրտին վրայ արդար հպարտութեամբ, քաջառողջութեամբ և ընտանեկան երջանկութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 26 Մարտի
1986 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԼԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Հմր. 1415